ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2025 թվականի N 469-Ա

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-073-0233-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.12258 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. N 1066-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետով, ՀՀ կառավարության 04.08.2005թ. N 1440-Ն որոշումով, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը, Կադաստրի կոմիտեի 19/03/2025թ. Կ-19032025-06-0212 որոշումը՝

որոշում եմ.

1. Ալավերդի համայնքի Մեծ Այրում գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքի կադաստրային 06-073-0233-0001 ծածկագրով, 0.12258 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ նշանակության՝ ցածրարժեք հողատեսքը փոխադրել բարձրարժեք հողատեսքի՝ II կարգի ջրովի վարելահողի:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո այն ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
3. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. մարտի 31
ք. Ալավերդի